Հավելված 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
2026թ. հունիսի 18-ի N 245-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2026 թվականի հուլիսի 01–ից

«Լանչիր ու մինչև 10% idcoin ստացիր» արշավի իրականացման պայմաններ

1. Պայմանների կիրառման շրջանակը և պայմանների ընդունումը

1.1 Սույն պայմանները կարող են կիրառվել բացառապես ֆիզիկական անձ Հաճախորդի կողմից կատարված QR վճարումների նկատմամբ:
1.2 Արշավին մասնակցելու դեպքում Հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի: Մասնակցելով արշավին և ընդունելով idcoin-ները՝ «Այդի Բանկ» ՓԲԸ հաճախորդ չհանդիսացող անձինք տալիս են իրենց համաձայնությունը իրենց անձնական տվյալները՝ եկամտահարկի հաշվարկման և վճարման նպատակով «Այդի Բանկ» ՓԲԸ-ին փոխանցելու համար:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 **Արշավ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 01.07.2026թ-ից 31.08.2026թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
2.2 QR **վճարում՝** «Իդրամ» ՍՊԸ (այսուհետ՝ Իդրամ) սպասարկման ցանցում ֆիզիկական անձանց կողմից Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածով) իրականացված QR վճարում (այդ թվում NFC, QR տեխնոլոգիայով QR վճարումները):
2.3 idcoin՝ հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
2.4 **Հաճախորդ՝** ցանկացած օգտատեր, ով կիրականացնի Idram&IDBank հավելվածով (ներառյալ idplus հավելվածով) QR վճարում «Սրճարան, ռեստորան, բար» կատեգորիայում:

3. Արշավի պայմաններ

3.1 Արշավի շրջանակում, 01.07.2026թ-ից 31.08.2026թ-ը ներառյալ, Հաճախորդները կատարելով QR վճարումներ Գործընկեր սրճարաններում, ռեստորաններում և բարերում յուրաքանչյուր օր 12:00-15:00 ընկած ժամանակահատվածում՝ կստանան մինչև 10% ակնթարթային idcoin, բայց 01.07.2026թ-ից 31.08.2026թ-ը ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար ոչ ավել քան հանրագումարային 10 000 idcoin (հարկումից հետո):
3.2 Գործընկեր սրճարանների, ռեստորանների և բարերի ցանկը տեղադրված է Բանկի գործընկեր «Իդրամ» ՍՊԸ-ի կայքում հետևյալ հղմամբ՝
https://www.idram.am/cashlesspayments?search=&thematicid=40&filterby=1

3.3 QR վճարման դեպքում idcoin-ի ստացման համար հիմք են ընդունվելու բանկային հաշիվներով, կից քարտերով, դրամապանակով, idplus կուտակված բոնուսներով/նվեր քարտերով, idcoin-ով, կոմբո տարբերակով, rocket line/rocket line 0%-ով կատարված վճարումները:
3.4 Արշավին մասնակից որևէ անձ չի կարող 01.07.2026թ-ից 31.08.2026թ-ը ներառյալ, որևէ օրացուցային ամսվա ընթացքում իր կատարած վճարումների համար ակնկալել նախատեսված հանրագումարային առավելագույնը 10 000 idcoin-ից (հարկումից հետո) ավել idcoin կամ որևէ այլ տեսակի հատուցում՝ անկախ կատարված վճարումների քանակից: Արշավի ընթացքում վճարման ենթակա idcoin-երի առավելագույն սահմանաչափից ավել idcoin կամ որևէ այլ տեսակի հատուցում Արշավի ավարտից հետո ևս ենթակա չէ վճարման:
3.5 Փաստացի ստացման ենթակա idcoin-ը Հաճախորդին տրամադրվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված եկամտային հարկի և այլ պարտադիր վճարների գանձումից հետո, եթե այդպիսիք լինեն: Պետությանը վճարման ենթակա բոլոր անհրաժեշտ հարկերը վճարվում են Բանկի հաշվին և կողմից:
3.6 Արշավին մասնակցած և Բանկի հաճախորդ չհանդիսացող օգտատերերը, որոնք Արշավի ընթացքում Idram&IDBank հավելվածի միջոցով կանցնեն նույնականացման գործընթաց և կդառնան Բանկի հաճախորդ, արշավի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կստանան 1000 idcoin (հարկումից հետո):
3.7 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
3.8 idcoin-ի տրամադրման և սպասարկման կանոնները տեղադրված են հետևյալ հղմամբ՝ https://idbank.am/upload/iblock/51c/14i130b2nrcrqh52uxfqtkoqi1j347j6/0440_VSH_idcoin_TC_200225.pdf
3.9 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում Բանկի պաշտոնական կայքում դրանց հրապարակման պահից և տարածվում են հրապարակման պահից հետո կատարված վճարումների վրա: